

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԹԻՖԼԻՍԻ ՊԱՏԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԵՍ

Թիֆլիսում գոյութիւն ունի նկարիչների մի ընկերութիւն, որ կրում է Երեմեյիկ արուեստները խրախուսող Կովկասեան ընկերութիւն աւանդ: Այդ մի մեռեալ մարմին էր, որ միայն վերջին երկու տարիները բաւական եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս: Ձմեռուայ ընթացքում նա տալիս է շաբաթական մի երեկոյթ—նկարչական-երաժշտական, իսկ տարէնը երկու անգամ կազմում է պատկերահանդէս Թիֆլիսի Ձիւնուորական Թանգարանի շինութեան մէջ:

Վերջին պատկերահանդէսը, որ մօտ երկու ամիս տեցաւ էր ընկնում նկարների քանակութեամբ, նաև որակութեամբ: Այս անգամ ի ցոյց էին դրուած 300-ից աւելի կտաւներ թէև մեծ մասամբ անաւարտ գործեր: Այստեղ այցելուն կարող էր ծանօթանալ բոլոր Կովկասեան նկարիչների գործերի հետ, բացի մի երկուսից:

Առաջին տեղը թէ՛ քանակութեան և թէ՛ որակութեան կողմից բռնում էր պէյզաժը (գիւղանկարը) և պէյզաժիստների մէջ աչքի էին ընկնում մեր վաղեմի ծանօթները— պ. պ. Բաշինջաղեան, Ձանկովսկի և Ջախարով: Պ. Ձանկովսկու գործերն այս անգամ արտայայտում էին տաղանդի վերին աստիճանի յոգնածութիւն: Գրեթէ բոլոր նկարները թողնում էին շտապ, անհոգ և անփոյթ կտտարուած գործերի տպաւորութիւն: Նոյնը կարելի է ասել մասամբ Ջախարովի նկարների մասին, այն տարբերութեամբ սակայն, որ սրանք չունենալով պ. Ձանկովսկու նախկին նկարների խորութիւնը, ունին գոնէ աւելի թարմութիւն: Մի քանի նկարներ յաջող են և դիտւում են հաճոյքով:

Աւելի ինքնատիւ է պ. Բաշինջաղեանի վրձինը: Հաճոյքով նկատում ենք, որ հայ նկարչի քանքարը շարունակում է զարգանալ: Հիմարիտ է, նրա 42 նկարներից գրեթէ կէսը կըրկնութիւն էին վաղուց մշակուած նիւթերի, բայց կան և այնպիսիները (Գիշերը Դարիալի Ձորում, «Գեօգ-Գեօլ լիճը», «Ան-

տառը Մանգլիսում*), որոնք կրում են անկեղծ ներշնչման դրոշմ:

Վատ չէին պ. Թէրլէմէզեանի նկարները, բայց նկարչի վրձինը դեռ բնորոշ չէ և արտայայտում է սկսնակի թերութիւնները:

Պ. Յակովբեանի ոչ այնքան բեղմնաւոր վրձինը անհերքելի շնորհքի հետ արտայայտում է և անփութութիւն: Նրա ներկերը համակրելի են իրանց զասաւորութեամբ, բայց ֆիգուրների մէջ համաչափութիւն չը կայ: Օրինակ, նրա հովիւն այնքան երկայն է նկարուած իւր անծայր ցուպով, որ ուղղակի նսեմացնում է նկարի բոլոր իւրա արժանաւորութիւնները: Նոյնը և „Իսլխանում“ նկարն է: „Քէփ անողներ“ գլուխները նկարուած են ահադին մեծութեամբ, իսկ սեղանի վրայ գրտնուղ իրերը—գինու կուլան, բաժակներն և այլն միջբոսկօղիկ չափով:

Պ. Թադէոսեանն անկասկած շնորհքով նկարիչ է, միայն չենք հաւանում նրա յափշտակուիլը դեկադանսով: Այդ ինչ սովորութիւն է նկարի ամբողջ ֆօնը ծածկել թանձր կանաչով կամ լեղակի գոյնով: Նրկուսից մէկը, կամ հայ նկարիչը թող ամեն կապ կարի նկարչութեան հասկանալի և պարզ ձևերի հետ, դառնայ լիովին դեկադենա կամ նկարի մեզ հասկանալի եղանակով: Մենք չենք պնդում, թէ դեկատենտների մէջ շնորհքով մարդիկ չը կան, բայց չենք էլ կարող համաձայնուել, որ ամեն մի խժրժանք գեղարուեստ է: Այժմ անթիւ է գեղարուեստների բոլոր ճիւղերում այն անձանց թիւը, որոնք իրանց ճաշակի կոպտութիւնը ծածկում են մի սովորական ֆրազով. „Դուք չէք հասկանում, դա նոր շկօլա է“: Բարեբաղդաբար, այժմ այդ ֆրազներով ոչ ոքի չի կարելի խաբել և ճաշակ ունեցողները վաղուց են իրանց դատավճիռը տուել անշնորհք և „անհասկանալի խժրժանքների մասին:

Կրկնում ենք, պ. Թադէոսեանը շնորհքով նկարիչ է, կը ցանկանայինք, որ նա չենթարկուէր զանազան ֆօզէյլների ազդեցութեանը: Ափսոս է նրա ձիւքը, մանաւանդ որ աշխատասէր է:

Կովկասեան պօրտրետիստներն ու ժանրիստները շատ են սիրում իրանց նիւթերն ընտրել ստորին խաւերից: Համբալ, բանուոր, կինոս, մուրացկան, քիւրդ, եգիպ—ահա նրանց սովորական սիւսէները: Դա, ի հարկէ, պակասութիւն չէ: Ամեն մի նիւթ արժանի է նկարչի համահաւաստ ուշադրութեանը: Բայց միատեսակութիւնը ամեն բանում ձանձրալի է: Այս տեսակէտէից մի փոքր թարմութիւն է ներկայացնում մեր նկարիչների շրջանում պ. Արտազեանը: Սա սիրում է նկարել գրեթէ բացառապէս կանանց և այն էլ կրթուած շրջանից վերջներով նիւթը: Ունի երկու փոքրիկ գործեր, որ մեզ դիւր եկան, «Լճակի մօտ» և „Քիչերային Նիմֆ“:

Անդրիապօրծ պ. Միքայէլեանն ունի մի փոքրիկ արձան

„Շուշեցի հայը“, որ բաւական բնորոշ և գեղեցիկ գործ է: Բայց որքա՜ն տշխատանք է հարկաւոր պարոնին, որ վերջ ի վերջոյ իւր համար ճանապարհ հարթի: ԳՆՂԱՍԷՐ

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՐ. ՄՕՐՏՕՆԻ ՓՈՐՁՆԵՐԸ: Ամերիկական թերթերը հաղորդում են Դր. Մորտոնի կատարած փորձերի մասին ըաղի — ակտիւ վերաբերութեամբ: Մորտոնը յայտնում է, որ ըաղին գործ դնելով ինչպէս բժշկական միջոց, բժշկել է խլիրդի (раба) երեք դէպք, և այժմ երկու նման հիւանդներ էլ բժշկուելու վերայ են:

Նորա ասելով, բժշկութեան ոյժը նորա մէջն է, որ ըաղին գեղերին տալիս է լուսի ճառագայթներ, որոնք իբրև հեղուկ լոյս թափանցում են զարկերակների մէջ: Ըաղին և X-ճառագայթները կարող են խլիրդը բժշկել, մինչև որ սա չէ բացուել: Երբ լուսի ճառագայթները թափանցում են ամբողջ արիւնային համակարգութեան մէջ, այդ լոյսի տպաւորութիւնը սկսում է ներգործել հիւանդ տեղերի վերայ: Մտամբքի մէջ զգուշութեամբ կարելի է ներս տանել ըաղիով մի փոքր անօթ, որ և կներգործէ շրջապատող միջավայրի վերայ: Հիւանդին կարելի է տալ լուսի ճառագայթներ պարունակող ջրից փոքր ինչ, բայց մեծ զգուշութեամբ, որովհետև խիստ ներգործող միջոցներիցն է այն:

Խլիրդը բժշկելիս Մորտոնը առաջ տալիս է քինա կամ ուրիշ դեղ, որ ընդունակ է ճառագայթների ազդեցութեամբ ներընդունել ճառագայթները: Եւ այնուհետև հիւանդներին ենթարկում է ըաղիի կամ X-ճառագայթների ազդեցութեան: Նա յայտնում է որ երեկի հետեանքների է հասել ճահճատենդը, լուպուսը, տուբերկուլիոզը և այն բոլոր հիւանդութիւնները բժշկելիս, երբ հարկաւոր էր վնասուած հիւսուածները փոխարինել նոր, թաքմ հիւսուածներով, որոնք ընդունակ լինին դիմադրել մանրէների զարգացման:

Դր. Մորտոնը համոզուած է, որ լոյսը ներմուծելով արեան մէջ և յետոյ փոխարինելով ըաղիով՝ կարելի է բժշկել թութախտը: Ըաղին և X-ճառագայթները կազմակերպում են նոր հիւսուածներ: Բայց զգուշութեամբ պէտք է գործադրել, որովհետև նա, շատ խիստ չափով՝ առողջացնելու փոխարէն կարող է սպանել:

ԵՂԻՍՏՕՆԻ ՆՈՐ ԳԻՏԸ: Էդիսսոնը չուտով կծանուցանէ իւր նոր գիւտի մասին, որով հեռախօսի միջոցով խօսողը կը տեսնէ միևնոյն ժամանակ և այն անձի դէմքը, որ խօսում է նորա հետ: Այս գործի վերայ Էդիսսոնը աշխատում է 1889 թուից սկսած:

ԷԼԵԳՏՐԱԿԱՆ ՍՈՒՐԶԱՆԴԱԿ. Իտալացի ճարտարապետ ԼՈՒՄՅՑ